ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

Էքսպեր. և կլինիկ. բժշկ. հանդես

VII, № 4, 1967

Журн. экспер. и клинич. медицины

Հ. Ա. ԽԱՆՈՅԱՆ

# ԹՈՔԱՅԻՆ ՈՉ ՍՊԵՑԻՖԻԿ ԽՐՈՆԻԿԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՆ ՈՒ ԵԼՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԹԵՐԱՊԵՎՏԻԿ ԿԼԻՆԻԿԱՅԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ (1958—1965 թթ.)

*Հայաստանի բժիշկների կատարելագործման ինստիտուտի թերապևտիկ կլինիկան իր գոյության ութ տարվա ընթացքում կատարելագործելով բուժման մեթոդները, հարստացնելով այն նորանոր միջոցներով, օգտագործելով բժշկական նորագույն տեխնիկան, բուժել և աշխատանքի է վերադարձրել բազմաթիվ հիվանդների։*

*Այդ թերապևտիկ հիվանդների մեջ իրենց ուրույն տեղն են գրավում թոքային ոչ սպեցիֆիկ խրոնիկ հիվանդությամբ տառապողները։*

*Այս աշխատանքի նպատակն է թերապևտիկ կլինիկայից անցած հիվանդների ընդհանուր թվից անջատել թոքային այդ հիվանդներին, ուսումնասիրել հիվանդությունների շարժման պատկերը, նրանց տեսակարար կշիռը, շարժման օրինաչափությունները, որոնք կկարողանան օգնել այդ հիվանդների հետագա բարձրորակ բուժման կազմակերպմանը։ Մշակման նյութը քաղված է բժիշկների կատարելագործման ինստիտուտի թերապևտիկ կլինիկայի 1958—65 թթ. ժամանակաշրջանի հիվանդների ընդհանուր տվյալներից։*

*Թոքային ոչ սպեցիֆիկ խրոնիկական հիվանդություններն աչքի են ընկնում իրենց տարածվածությամբ (ինչպես ցույց է տալիս 1-ին աղյուսակը) և դժվարաբուժությամբ (ինչպես մենք կտեսնենք հաջորդ աղյուսակներում)։*

*Մեր հետազոտությունները պարզել են, որ թերապևտիկ կլինիկայում ընդունված հիվանդներից՝*

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1958 թ. | թերապևտիկ | 575 | հիվանդից | թոքայինը | կազմել է | 25 հ.—4,4 % |
| 1959 թ. | » | 779 | » | » | » | 66 հ.—8,5 % |
| 1965 թ. | » | 1636 | » | » | » | 141 հ.—8,6 % |

*իսկ մահճակալ օրերը՝ թերապևտիկ հիվանդների*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1958 թ. | կազմել է | 2080, | որից | թոքայինը | 661 մահճ. օր—5,5 % |
| 1959 թ. | » | 15400 | » | | 1638 մահճ. օր—10,6 % |
| 1965 թ. | » | 34931 | » | | 3768 մահճ. օր—10,6 % |

*Ուսումնասիրված ժամանակաշրջանի երկրորդ կեսից սկսած թոքային հիվանդների և՛ մահճակալ օրերն են ավելացրել, և՛ քանակը (աղյուսակ 1), կապված թերապևտիկ հիվանդների քանակի բարձրացման հետ, որը բացատրվում է մահճակալների քանակի շատացմամբ, այսինքն՝ 1958 թ. մինչև 1961 թ. մահճակալների քանակը թերապևտիկ կլինիկայում եղել է 50, իսկ 1962 թվին հասել է 100-ի։*

*Վերոհիշյալ ժամանակաշրջանում թոքային հիվանդներն ըստ քանակի կազմել են թերապևտիկ հիվանդների միջին թվով 7 տոկոսը, իսկ ըստ մահ-*

ճակալ օրերի՝ 8,5 տոկոսը։ Թոքային հիվանդների մահճակալ օրերի տոկոսի բարձր լինելը բացատրվում է այդ հիվանդների բուժման երկարատևությամբ (մեկ թոքային հիվանդի բուժման միջին տևողությունը 25,6 մահճակալ օր է, իսկ թերապևտիկինը՝ 20,2 մահճակալ օր)։

Աղյուսակ 1

| Տարեթիվը | Հիվանդ. բացարձակ թիվը | | | Մահճակալների թիվը | | |
|---|---|---|---|---|---|---|
| | թերապևտիկ | որից թոքային | | թերապևտիկ | որից թոքային | |
| | | քանակը | տոկոսը | | քանակը | տոկոսը |
| 1958 | 575 | 25 | 4,4 | 12080 | 661 | 5,5 |
| 1959 | 779 | 66 | 8,5 | 15400 | 1638 | 10,6 |
| 1960 | 850 | 65 | 7,6 | 13600 | 1544 | 11,3 |
| 1961 | 420 | 35 | 8,3 | 7476 | 959 | 12,8 |
| 1962 | 598 | 31 | 5,2 | 12578 | 667 | 5,3 |
| 1963 | 1419 | 62 | 4,4 | 34896 | 1711 | 12,2 |
| 1964 | 1644 | 126 | 7,7 | 24545 | 3175 | 9,2 |
| 1965 | 1636 | 141 | 8,6 | 34931 | 3768 | 10,8 |
| Գումարը՝ | 7921 | 551 | 7,0 | 165506 | 14126 | 8,5 |

Թոքային ոչ սպեցիֆիկ խրոնիկ հիվանդությունների պատկերն ավելի պարզ արտահայտելու համար մենք այն բաժանել ենք խմբերի և դուրս բերել կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը ըստ տարեթվերի և ըստ դիագնոզների։ Այդ հիվանդություններից առաջինը խրոնիկ բրոնխիտն է, որը մյուս թոքային հիվանդությունների մեջ կազմում է 55,6%, երկրորդը՝ ասթմատիկ բրոնխիտը—16,5%, երրորդը՝ բրոնխիալ ասթման—10,3% և վերջինը՝ 4-րդ խումբը, խառը խումբն է—11,4%, որի մեջ մտնում են թոքերի թարախակալույտը, փտախտը, բրոնխոպնևմոնիաները՝ իրենց քանակի քիչ լինելու պատճառով։

Վերջին խմբում մեծ մասը կազմում են բրոնխոպնևմոնիաները։ Ըստ հիվանդների սեռի, մեծամասնությունը կազմում են տղամարդիկ, բացառությամբ բրոնխիալ ասթմայի, որտեղ տղամարդիկ փոքրամասնություն են կազմում, իսկ կանայք 1,6 անգամ ավել են։

Խրոնիկ բրոնխիտի մեջ հատկապես մեծամասնություն են կազմում տղամարդիկ և 2,4 անգամ գերակշռում են կանանց թվին (աղյուսակ 2)։

Ջանալով ավելի պարզ և ավելի ճիշտ պատկերացում տալ թոքային հիվանդությամբ տառապող հիվանդների մասին, մենք նրանց բաժանեցինք տարիքային խմբերի, որտեղ արտահայտված է նաև սեռը։ Վերցված է հիմնականում չորս խումբ.

15—40 տարեկան՝ 52 կին, 57 տղամարդ,
41—60 տարեկան՝ 105 կին, 165 տղամարդ,
61—68 տարեկան՝ 34 կին,
61—70 տարեկան՝ 25 տղամարդ։

և վերջին խումբը՝ երկարակյացների խումբն է, որտեղ մտնում են կանայք՝ 69 տարեկանից բարձր, թվով 13 հիվանդ, իսկ տղամարդիկ՝ 71 տարեկանից բար-

ձը՝ թվով 25 հիվանդ։ Դիտելով 2-րդ խումբը՝ 41—60 տարեկանը, կարելի է եզրակացնել, որ այդ հասակը երկու սեռերի համար էլ, թոքային ոչ սպեցիֆիկ հիվանդությունների տեսակետից, ավելի խոցելի է (աղյուսակ 3)։

Աղյուսակ 2

Դիագնոզ

| Տարեթիվը | Թոքային հիվանդ. քանակը | Խրոնիկ բրոնխիտ | | Աստմատիկ բրոնխիտ | | Բրոնխային աստմա | | Բրոնխոէքստազ | | Այլ թոք. հիվանդ. | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | քան. | տոկ. | քան. | տոկ. | քան. | տոկ. | քան. | տոկ. | քան. | տոկ. |
| 1958 | 25 | 12 | 48,0 | 1 | 4,0 | 5 | 20,0 | 4 | 16,0 | 3 | 12,0 |
| 1959 | 66 | 44 | 66,7 | 12 | 18,2 | 6 | 9,1 | 3 | 4,5 | 1 | 1,5 |
| 1960 | 65 | 37 | 56,9 | 9 | 13,9 | 2 | 3,1 | 1 | 1,5 | 16 | 14,6 |
| 1961 | 35 | 19 | 54,3 | 3 | 5,7 | 6 | 17,1 | 3 | 8,6 | 5 | 14,3 |
| 1962 | 31 | 17 | 55,0 | 6 | 19,3 | 4 | 12,8 | 4 | 12,9 | — | — |
| 1963 | 62 | 32 | 51,7 | 11 | 17,7 | 11 | 17,7 | 2 | 3,2 | 6 | 9,7 |
| 1964 | 126 | 65 | 51,7 | 25 | 19,7 | 12 | 9,5 | 7 | 5,6 | 17 | 13,5 |
| 1965 | 141 | 80 | 56,8 | 15 | 17,7 | 11 | 7,8 | 10 | 7,1 | 15 | 10,6 |
| Ընդամենը՝ | 551 | 306 | 55,6 | 91 | 16,5 | 57 | 10,3 | 34 | 6,2 | 63 | 11,4 |

Աղյուսակ 3

Թոքային հիվանդներն ըստ տարիքային խմբերի

| Տարեթիվը | Բացարձակ քանակը | | Հիվանդներն ըստ տարիքային խմբերի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին խումբ | | | | 2-րդ խումբ | | | | 3-րդ խումբ | | | | 4-րդ խումբ | | | |
| | | | կին 15—40 | | տղ. 15—40 | | կին 41—60 | | տղ. 41—60 | | կին 21—60 | | տղ. 21—68 | | կին 69 ավ. | | տղ. 71 | |
| | քանակ | տոկոս | քան. | տոկ. | քան. | տոկ. | քան. | տոկ. | քան. | տոկ. | քան. | տոկ. | քան. | տոկ. | քան. | տոկ. | քան. | տոկ. |
| 1958 | 25 | 100 | 1 | 4,0 | 5 | 26,6 | 7 | 28,0 | 6 | 24,0 | 1 | 4,0 | 4 | 16,0 | 1 | 4,0 | — | — |
| 1959 | 66 | 100 | 6 | 9,1 | 9 | 13,6 | 10 | 15,1 | 23 | 35,0 | 4 | 6,0 | 11 | 16,7 | 2 | 3,0 | 1 | 1,5 |
| 1960 | 65 | 100 | 7 | 10,8 | 6 | 9,2 | 2 | 3,1 | 29 | 44,7 | 3 | 4,6 | 18 | 27,6 | — | — | — | — |
| 1961 | 35 | 100 | 2 | 5,7 | 4 | 11,4 | 10 | 26,6 | 15 | 44,9 | — | — | 4 | 11,4 | — | — | — | — |
| 1962 | 31 | 100 | 1 | 3,2 | 1 | 3,2 | 6 | 19,4 | 7 | 22,6 | 2 | 6,5 | 12 | 38,7 | 1 | 3,2 | 1 | 3,2 |
| 1963 | 62 | 100 | 10 | 16,1 | 6 | 9,7 | 12 | 19,4 | 15 | 24,2 | 8 | 12,9 | 10 | 16,1 | — | — | 1 | 1,6 |
| 1964 | 126 | 100 | 13 | 10,3 | 10 | 7,9 | 27 | 21,4 | 35 | 27,8 | 9 | 7,1 | 19 | 15,2 | 3 | 2,4 | 10 | 7,9 |
| 1965 | 141 | 100 | 12 | 8,5 | 16 | 11,3 | 31 | 22,0 | 35 | 24,8 | 7 | 5,0 | 22 | 15,6 | 6 | 4,3 | 12 | 8,5 |
| Ընդամենը | 551 | 100 | 52 | 9,4 | 57 | 10,3 | 105 | 19,1 | 165 | 39,9 | 34 | 6,2 | 100 | 18,1 | 13 | 2,4 | 25 | 4,6 |

Բոլոր խմբերի մեջ, ինչպես տեսնում ենք, տղամարդկանց թիվը գերակշռում է կանանց թվին։ Տղամարդիկ կազմում են 63%, իսկ կանայք՝ 37%։

Ախտահարված տղամարդկանց թիվն ակնբախ է հատկապես խրոնիկ բրոնխիտով տառապողների մեջ՝ 55,5% (ընդհանուր թվից)։

ԵԼՔԸ.— Վերլուծելով տարիների ընթացքում կլինիկայով անցած հիվանդների բուժման ընդհանուր ելքը, պարզեցինք, որ մահաբերությունը 1958—1965 թթ., այսինքն, ութ տարվա ընթացքում, կազմել է 2,5%, անփոփոխ դուրս է գրվել 5,3%-ը, լավացել է 78,3%-ը, և առողջացել է 13,9%-ը (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

| Հիվանդության ելքը | Տարեթվերը | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1958 | 1959 | 1960 | 1961 | 1962 | 1963 | 1964 | 1965 | քան. | տոկ. |
| Հիվանդների ընդ. քանակը | 25 | 66 | 65 | 35 | 31 | 62 | 126 | 141 | 551 | 100 |
| որից՝ | | | | | | | | | | |
| ա) մահաբեր | 3 | — | 2 | 1 | — | 2 | 1 | 5 | 14 | 2,5 |
| բ) անփոփոխ | 1 | 2 | 3 | 2 | 6 | 5 | 2 | 8 | 29 | 5,3 |
| գ) լավացում | 19 | 58 | 54 | 29 | 22 | 48 | 110 | 117 | 431 | 78,3 |
| դ) առողջացում | 3 | 8 | 9 | 4 | 5 | 10 | 17 | 21 | 77 | 13,9 |

Այսպիսով, բերված վիճակագրական տվյալները մեզ թույլ են տալիս եզրակացնելու.

1. Թերապևտիկ հիվանդների մեջ բավական մեծ տեղ են բռնում թոքային ոչ սպեցիֆիկ խրոնիկական հիվանդություններով տառապողները:

2. Այդ հիվանդների մահճակալ-օրերի թիվը մյուս թերապևտիկ հիվանդությունների համեմատությամբ բարձր է՝ երկարատև բուժման կարիք ունենալու պատճառով:

3. Թոքային ոչ սպեցիֆիկ խրոնիկ հիվանդություններով ախտահարված են ավելի շատ տղամարդիկ՝ 63%, քան կանայք՝ 37%, որոնք համեմատաբար հաճախ են հիվանդանում բրոնխիալ ասթմայով (1,6 անգամ):

4. Ըստ տարիքի, աշխատավորներն ավելի մեծ քանակ են կազմում 2-րդ խմբում՝ 41—60 տարեկան հասակում:

5. Ստացիոնար կոմպլեքսային բուժման շնորհիվ թոքային ոչ սպեցիֆիկ խրոնիկական հիվանդությունների լավացման տոկոսը բարձրացել է. այն կազմում է 78%:

Երևանի բժիշկների կատարելագործման
ինստիտուտի թերապևտիկ կլինիկա

Ստացված է 8/VI 1966 թ.

А. С. ХАНОЯН

## ТЕЧЕНИЕ И ИСХОД НЕСПЕЦИФИЧЕСКИХ ХРОНИЧЕСКИХ ЛЕГОЧНЫХ ЗАБОЛЕВАНИЙ ПО ДАННЫМ ТЕРАПЕВТИЧЕСКОЙ КЛИНИКИ ЕГИДУВ-а (1958—1965 гг.)

### Резюме

Статистические данные по течению и исходу неспецифических хронических легочных заболеваний дают возможность сделать следующие выводы.

1. Среди терапевтических больных значительное место занимают страдающие неспецифическими хроническими болезнями легких (7%).

2. Количество койко-дней по этим болезням выше, чем по другим терапевтическим болезням, что объясняется длительностью процесса лечения их.

3. Неспецифическим легочным заболеваниям больше подвержены мужчины (63%), чем женщины (37%), которые чаще болеют бронхиальной астмой (1,6 раз).

4. Наибольшое количество больных встречается в возрасте 41—60 лет.

5. Благодаря комплексному лечению процент излечиваемости неспецифических легочных больных повысился и составляет 78,5%.